Ռուդոլֆ Խաչատրյան.

«ՆԿԱՐԻՉԸ ԼՈՒՅՍ ՊԻՏԻ ՏԱ»

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՆԱԽՕՐԵՐԻՆ

...Եվ անա Դուք նորից նեղվանում եք: Բառով եք եկել:

— Ամենուկս առաջ էլ նրանում էի, եվ առհասարակ՝ միշտ աջակից եմ Նրբեմն՝ Նկարներով, Նրբեմն՝ առանց: Իսկ հոգով՝ միշտ: Երկու տանամայակ ապրում եմ հանրապետությունից դուրս (Մոսկվայում): Նոր ցուցահանդեսներս սկզբում կազմակերպում եմ Երևանում, հետո՝ այլ քաղաքներում:

— Այս անգամ ե՞ս այդպես է:

— Այս անգամ՝ նույնպես: Եվ բոլոր հաջորդ դեպքերում՝ գարձյալ կլինի այդպես:

— Ուրեմն վաղը Հայաստանի նկարչի տաքը բացվող Ձեր անհատական պատկերահանդեսի նոր աշխատանքները ուրիշ քաղաքներ, երկրների ցուցարահանդեսում դեռ չեն եղել:

— Նրանց առաջինը կծանոթանան երևանցիները: Ընդհանրապես չեմ սիրում հին գործերով ներկայանալ արվեստասերներին, նկարը ցուցահանդեսից ցուցահանդես տեղափոխել: Այս ցուցադրության համար ընտրել եմ 50 գործ, որոնցից 45-ը արվեստանոցից նոր են դուրս գալիս: Ցուցասրահի ազատուկ չնչելն, արվեստանոցի լուությանն են սովոր եղել: Վերջին երկու-երեք տարվա աշխատանքներս են:

— Ո՞րն է Ձեր վերջին շրջանի ստեղծագործության մեջ առավել հետաքրքիրը Ձեզ համար: Ի՞նչ նորություն եք հրամցնելու այցելուներին:

— Նկարչի աշխատանքները վերլուծելը արվեստաբանների գործն է: Միայն ասեմ, որ ինձ համար նորությունը լինեսի տեխնոլոգիային գիմելն է, որով աշխատել են հին վարպետները:

Այս եղանակով մեր ժամանակակից նկարիչներից, որքան ինձ հայտնի է, առայժմ միայն ես եմ աշխատում: Հիշեցնեմ. լինսոր փայտի մակերևսի մշակման մի եղանակ է, որի շնորհիվ այդ մակերևսը առանձնահատուկ հիմնանյութով է երևսպատվում: Դրանով նոր հնարավորություններ են բացվում գծանկարչի առջև: Իմ խորագիրն այն եմ համարում, որ այս եղանակով բացահայտած գծանկարչության բոլոր հնարավորությունները: Սպառում դրանք: Մինչև հիմա գծանկար ենք արել թղթի, խավաքարտի վրա: Մատիտի կենդանի նյութով մեռած թղթի, խավաքարտի վրա ենք արվեստ ստեղծել: Իսկ կամքային լինսոր կենդանի հիմնանյութ է: Գրաֆիտը և հիմնանյութը խառնվելով, հարուստ հնարավորություններ են տալիս: Նոր սահմաններ ես մտնում:

— Դում անընդհատ օգտագործում եք «գծանկարչություն» բառը և խուսափում համընդհանուր ընդունելության արժանացած «գրաֆիկա» տերմինից...

— Որովհետև չեմ սիրում «գրաֆիկա» անվանումը: Ես գրաֆիկ չեմ: Ես գծանկարիչ եմ: Հաճախ եմ անվանում իմ գործը՝ գծանկարչություն... Գեղանկարչի, քանդակագործի համար գծանկարչությունը դպրոց ու հիմք է հանդիսանում, օժանդակ միջոց՝ գեղանկար, քանդակ ստեղծելիս: Ես գիծը դարձնում եմ հիմնականը: 20-րդ դարի արվեստը ԼՈՒՅՍԻ արվեստ է: Իսկ լույսը գիծն է: Անտիկ աշխարհի արվեստը՝ քանդակագործությունը ՁԻԵՐԻ արվեստ էր: 20-րդ դարի արվեստը, իմ կարծիքով, ԼՈՒՅՍԻ արվեստ է: Ինչ որ գոյություն ունի սուրբ երրորդություն՝ քանդակ, գեղանկարչություն, գծանկարչություն: Նրանք միասնական են: Ինչպես Աստվածաշնչում միասնական են Հայրը, Որդին, Սուրբ Հոգին: Անտիկ աշխարհից մինչև մեր օրերը արվեստի զարգացման պատմությունն մեջ նրանք միշտ միասին են հանդես եկել: Բայց յուրաքանչյուր շրջանում գերիշխել է մեկը. անտիկ արվեստում՝ մեր (քանդակ), Վերածնունդի արվեստում՝ իմաստը (գեղանկար), այժմ ինձ համար կերիշխողը լույսն է (գծանկար): Չէ՞ որ մթությունն մեջ լույսն ընկնում է գծի տեսքով: Ուշադրություն դարձրե՞լ եք լուսարձակի շղթին: Գծով է ընկնում, չէ՞: Ինձ համար գլխավորը գիծն է, գծանկարությունը: Ես աշ եմ կարևորում:

— Մինչև հիմա խոսում էիք աշխատանոցի և դրանով արտահայտված ստեղծագործական սկզբունքի մասին: Այժմ կուզենայի, որ ներկայացնեիք նորությունները բնմատիկ առումով:

— Նկարել և ցուցադրելու եմ հայկական բնակիչների, նատյուրմորտների, դիմանկարների նոր շարքերս: Իմ կարծիքով, իրն արդեն ինքնին թեմա է: Ձեմ սիրում նկարչության մեջ գրական սյուժե ներմուծել: Ահա նատյուրմորտներիս մեջ չորացած ծաղիկներ են: Դրանք ինձ համար մեռած ծաղիկներ չեն: Ունեն իրենց կյանքը: Նկարչությունն այնքան կենդանի աշխարհ է, որ ինչ էլ նկարվի, կենդանի է երևում ինքն էլ:

Ես դիմանկարային մտածողության ունեմ: Իրը, բնանկարը, նատյուրմորտը իրենց դիմանկարն ունեն: ստեղծում եմ չորացած ծաղիկի, պղնձե կաթսայի, այլ իրերի դիմանկարներ: Այս ամենը կարոտ, նոստալգիա է նաև: Ես նկարում եմ իմ մանկությունը: Հին բակեր եմ շատ սիրում: Մանկուց հիշողությանս մեջ են մնացել: Մեր գյուղերն եմ հիշում, ուր եղել եմ փոքր տարիքիս: Նկարելով հին բակերը, գյուղերը, նկարում եմ իմ մանկությունը:

— Ի՞նչ մտքով եք առաջնորդվում մարդանց դիմանկարներ ստեղծելիս: Որո՞նք են Ձեր սկզբունքները:

— Մարդանց դիմանկարները... Նկարիչը միշտ նկարում է նրան, ով ավելի մոտ է իրեն: Հոգեպես: Փիլիսոփայորեն: Նույնը՝ ես: Զրգտում եմ հոգևոր հարուստ նեղաշխարհի մարդկանց: Նկարելիս չեմ մտածում՝ ինչ ներդնել այս մարդու մեջ: Ես ապրում եմ: Գրլխավորը սիրելն է: Ամենամեծ նկարիչը նա է, ով բոլորից շատ է սիրում: Դոստոևսկին ասում էր, որ գեղեցիկը կփրկի աշխարհը: Ես ասում եմ՝ սերը կփրկի աշխարհը: Որովհետև գեղեցիկը ծնվում է սիրուց: Եվ սիրելն ամենաժամանակ է: Սերն է հիմքը: Հետո է գալիս՝ ինչ ճանապարհով, ինչ միջոցով ես սերդ արտահայտում: Ես երջանիկ եմ, որ սերս արտահայտում եմ նկարչության միջոցով:

— Հավանաբար երկնային երջանկություն է, երբ մարդիկ ընդունում են քո սիրելու տեսակը: Եվ ընդունելուց հետո իրենք էլ մի ինչ այդպես՝ քո սիրով են սիրում աշխարհը, մարդուն:

Անշուշտ: Սերն էլ որակ ունի: Զգախանին այն է, թե ինչպիսի՞ն է քո սիրո որակը: Եթե մարդիկ ընդունում են այն, ուրեմն ես իմ գործը ճիշտ եմ անում: Արվեստը պիտի երջանկացնի մարդկանց: Սիրելը մշակույթի չափանիշ է: Մենք երջանիկ ենք, որ մեր քիկունքին ունենք մեծ մշակույթ, որը մեր առջևից է գնում: Արվեստագետն այս պարագայում ի՞նչ բնություն է անում. ահա չափանիշը: Իսկական արվեստագետը Նա է, ով իր մեջ ունի մեր այդ մեծ մշակույթը և, այն ունենալով, կարող է ասել՝ ես էլ իրավունք ունեմ նկարելու: Իմ վերջին աշխատանքներից ինձ համար շատ կարևոր են մեր մեծ Նարեկացու կերպարին անդրադառնալը, մեծ կոմիտասին դիմելը, որին երկրորդ անգամ եմ նկարում, և հայ մշակույթի մի շարք ուրիշ գործիչների դիմանկարները ստեղծելը: Կարևոր են նրանով, որ կարողացա իմ ժողովրդի մեծերին նկարել: Ինձ համար Նարեկացին աստծո պես մարդ է, աստվածային մարդ է: Նկարելու ընթացքում ձգտել եմ նրա կերպարի մեջ բացահայտել աստվածայինը, ճգնավորի հոգևոր աշխարհը: Նարեկացու և Կոմիտասի մեծագիր նկարները կոմիտասը դրսից նայում է եկեղեցու ներքը, իսկ Նարեկացին այնտեղ է, եկեղեցու ներսում, եվ, չնայած առանձին նկարներ են, սակայն խոսում են իրար հետ: Դիմանկարներիս մեջ այս երկուսն ինձ համար առանձնանում են մյուսներից:

— Այս ցուցահանդեսում ի՞նչ անսպասելի կողմով մեզ կներկայանա ժողովրդական նկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանը:

— Նախորդ ցուցահանդեսի նկարներում բացակայում էր ֆոնը: Այսպես մեծ տեղ է գրավում, եթե առաջ միայն ապրակ ֆոնի վրա էի նկարում, ապա հիմա մարդանոցության փափոխություն կա իմ գործերում:

— Ինչո՞վ եք բացատրում:

— Նրանի ավելի ազատ մտածելակերպով: Դա չի բացատրում, սակայն, որ վաղը Դորից վերադառնամ մարդու ֆոնին: Այսինքն՝ ոչինչ մտացածին չեմ անում:

— Մեր զրույցն սկսվեց այն նատատատումով, որ Դուք միշտ այստեղ եք: Բայց մենք ահա զրուցում ենք հյուրանոցում: Միշտ այստեղ եկած մարդն ինչպե՞ս է, որ ամեն այցելությանն հյուրանոցի համար է մտածում:

— Մեծ ցանկություն ունեմ Երևանում տուն ունենալ: Եթե իմ տունն ունենայի, կկարողանայի ավելի երկար մնալ, աշխատել Երևանում: Վերջիվերջո պետք է վերադառնամ հայրենիք: Երազանքս է Երևանի իմ ապագա տունարվեստանոցում կենտրոնացնել իմ բոլոր ստեղծագործությունները և հետագայում նվիրել հայրենիքիս Մոսկվայում ինձ պատմամշակութային հուշարձան համարվող առանձնատուն են առաջարկում, Երևանում կբավարարվեի ապրելի համար կացարանով: Տարվա կեսը կուզենայի Հայաստանում աշխատել: Հայրենակիցներիս, հայրենի բնությունը, գյուղերը, բակերը ավելի շատ նկարելու նպատակով:

— Ձեր գեղագույն նպատա՞կն է դա:

— Ինձ համար ամեն օր նորից է սկսվում նկարչությունը: Նորից է սկսվում կյանքը: Մոտացիր արածդ, ստեղծիր նորը: Հենց մատիտ եմ վերցնում, ինձ թվում է՝ նոր-նոր եմ սկսում նկարել: Կրցանկանայի, որ այսպես շարունակվեր:

— Նոր գործ սկսելիս, հետևաբար, պիտի որ վախ ունենաք:

— Ո՞չ: Ոչ սիրում է՝ չի վախենում: Զարմանք և հիացում եմ ապրում. կյանքի հանդեպ: Հրաշք չէ՞ ամեն ինչ: Խնձորը մնացել է խնձոր: Նա չի փոխվել: Որքա՞ն են խնձոր նկարել բոլոր արվեստագետները: Ի՞նչ են նույն բանը նկարել: Չէ՞ որ նա չի փոխվել: Բոլորն, ուրեմն, սիրել են խնձորը, հիացել նրանով: Եթե գումարենք նրանց սերը... Ի՞նչ հակայական սեր կլինի մի փոքրիկ խնձորի հանդեպ: Եվ ի՞նչ բազմազան սեր: Ամբողջ մարդկությունը մեկ մարդ է ինձ համար: Ինչքա՞ն է հիացել այս մեկ մարդը խնձորով: Ինչ բազմակողմանի է տեսել խնձորը: Բայց այդ խնձորն, այնուամենայնիվ, մնում է առեղծված: Անվերջանալի է: Ահա սա է հրաշքը: Ահա սա է «գրաֆիկան»...

Նկարիչը ոչ միայն պետք է նրանկարի աչքերով և ձեռքով, այլև՝ սրտով (վերադառնում եմ «գրաֆիկայի նպատակին»): Նկարիչն իր մեջ գիտակցականորեն պետք է ունենա «աստծունս»: Իր մեջ: Ոչ թե ինչ-որ տեղ երկնքում: Չէ՞ որ աստված է եղել «առաջին արվեստագետը»: Նա է առաջինը քանդակել: Ադամն առաջին «քանդակն» է, որին աստված շունչ պարգևեց և հոգևորեց: Իմ պատկերացրած այդ աստվածը լույսն է: Ներքի լույսը: Նկարիչը պիտի լույս տա: Եվ դա բարին է:

Հարցազրույցը վարեց՝
Հ. ԱՅՎԱԶՅԱՆԸ
Լուսանկարը՝
Ա. Եսայանի